

Սիրելի, դուն ալ՝ վասըն գի կը տեսնեմ
Ըզթեզ հըզօր ու գեղեցիկ՝ քաջ եղիր
Որ ապագան քեզի ալ տայ գոզեստներ»:

Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻՅԱՆ

(Շարունակելի)

ԿԱՊՈՅՏ ԵՄՂԻՅԸ

«Քառ Լեւոնի» անտիպ գրքոյկէն

○ ○

Անունն անոր, — չեմ գիտեր,
Գիտէ միայն ինքը՝ Տէր՝
Որ կապոյտն իր երկընքին
Անոր տըւեր է հազին:

Բայց ի՞նչ կապոյտ, չէք գիտեր,
Գիտէ միայն ինքը Տէր՝
Որ թիւեր է երկընքին
Յանցն երթներսնդ, ցոլագին:

Բլլրի մը ծոցը դալար
Անոր եղեր էր թաղար,
Ջերդ ծափ աչքն երկընքին
Կը քըթէր հոն ցոլագին:

Աչքն եղաւ ան փունջիս նոր
Ջոր կազմեցի ես այն օր.
Աչքը սրտիս երկընքին՝
Ուր բիւր թոյրեր կը ծաղկին:

Ուրիշ օրեր ալ երբ ես
Փունջ կապելու համար քեզ
Լեւներ, ձորեր եկայ ման:
Ջրգտայ ծաղիկը անմըման:

Ու բիլն անոր թերթերուն,
Տարտամուկեամբ մը թըրթուուն,
Հոգուս ցունց մը կու տայ միշտ
Երբ յիշեմ զայն դառնավիշտ:

Ու կը փընտռեմ, կը փընտռեմ
Ես ծաղիկն այն ժղպտաղէմ,

Ուր իմ սիրտը պատանի
Յաւերթօրէն տատանի՛....:

Բայց չեմ գըտներ, չեմ գըտներ.
Եւ յուսամատ, կարեվէր,
Անոր կապոյտ երկընքին
Մէջ փուլ կու գայ իմ հոգին....:

2 Ապրիլ 1922

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(ԵԳԻՍՅԱՊՈՍ)

[1897ի պատանեկան յուշերս՝ Վենետիկ Ապուլիոյ դէպի
Նաբուէնի բուրձնի վրայ]

ՏՈՐԵՆԻ ԵՐԳԵՐ

ՈՒԹԵՐՈՐԻ ՄԵՍԿԱԿԱՆ

ԿԱԼԵՐՈՒ ԳԻՇԵՐ

▽

Կալերու գիշեր, լուսնակն է ինկեր
Լիճին մէջ ոսկի.
Երգող հովերուն սրտին մէջ՝ բիւրեղ
Սիրտըս կը ծաղկի:

Կաթնասայլերուն եզները լծուած
Կը դառնան, երկար
Եղջիւրներն իրենց ալ արծաթուեր են
Յուլքերով պայծառ:

Գիւղը քուն չունի. դուն է դուռ կ'երթան
Տղաներ երգեցիկ.
Մէջ կը փափըսան տարփոտ շրթունքներ
Երդեքէ երդեք:

Յորենի բոյրով կալերու գիշեր,
Լիճին մէջ ոսկի.
Արծաթ ափսէով լուսնակն է ինկեր.
Սիրտըս կը ծաղկի....